ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ

ՔԱՐՈԶ
(9 ապրիլ 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Նոր խորանիդ արեգական արդարութեան նոր օրհնութիւնս տացուք և անդադար փառաւորեսցուք»:

Նոր խորանիդ՝ արդարության արեգակիդ, նորոգ օրհնություն կտանք և անդադար կփառավորենք:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հարությունից հետո այս երկրորդ կիրակին մեր Եկեղեցու սրբազան հայրապետները կոչել են Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի:

Աշխարհամատուռ բառը նշում է այն վայրը, ուր հավատացյալներն են հավաքվել աղոթելու նպատակով, և այդ վայրը հիմնված է եղել ի հիշատակ Քրիստոսի զոհագործության: Ուրեմն Աշխարհամատուռը այն աղոթավայրն է կամ Եկեղեցին, որը նվիրված է քրիստոնեության հիմնադրության գաղափարին՝ հիմք ունենալով Քրիստոսի զոհագործությունը:

Ճիշտ երկու շաբաթ առաջ Հայաստանյայց Եկեղեցին, մյուս քրիստոնյա Եկեղեցիների հետ, տոնախմբեց հիշատակը Քրիստոսի մատնության, դատապարտության, չարչարանքների, խաչելության, թաղման և հրաշափառ հարության: Նա իր մահվամբ հաղթեց մահվան:

Աստվածորդին մեզ նման ծնվեց, մարմնացավ, մարդացավ, որպեսզի իր մարդեղությամբ և զոհագործումով մեր մեղքերը սրբի, մեզ առաջնորդի դեպի արդարության և խաղաղության նավահանգիստը: Երբ Քրիստոսի երկրային առաքելությունն ավարտվեց, ըստ մարգարեների՝ գուշակության, նրան մատնեցին, դատապարտեցին և Գողգոթայի բարձունքում խաչեցին որպես մահապարտի: Ապա նա թաղվեց նորավոր գերեզմանում: Իր թաղումից երեք օր հետո մեռելներից հարություն առավ, վերակենդանացավ, աշակերտներին հայտնվեց որպես հարուցյալ և հաղթական Փրկիչ:

Հիսուս իր քարոզության տարիներին, հաճախ իր աշակերտներով շրջապատված, նրանց հետ կիսում էր իր մտածումները, առակներով իր միտքը բացատրում, այդպիսով դաստիարակում էր նրանց, ուսուցանում և բացում նրանց իմացականության դռները, դարձնելու համար նրանց սերմնացանները իր վարդապետության գաղափարների: Նման հավաքներ հաճախ էին տեղի ունենում Երուսաղեմում, Վերնատան մեջ:

Հիսուս վերջին անգամ, ավագ հինգշաբթի օրը, Վերնատան մեջ, իր մատնությունից քիչ առաջ, իր աշակերտների հետ ընթրեց: Առավ հացը, կիսեց և բաշխեց նրանց՝ ասելով. «Առեք, կերեք, այս է իմ մարմինը, որ ձեզ և շատերի համար բաշխվելու է վասն քավության և թողության»: Ապա վերցրեց գինու բաժակը, խմեց ու ասաց. «Խմեցեք սրանից բոլորդ, այս է նոր ուխտի իմ արյունը, որ ձեզ ու շատերի համար թափվելու է վասն քավության և թողության մեղքերի»: Այսպիսով նորահաստատ Եկեղեցու համար հիմնեց Ս. Հաղորդության խորհուրդը: Եվ այդպես, քիչ ժամանակ անց, նա իր անմեղ արյունը թափեց հանուր մարդկության մեղքերի քավության համար Գողգոթայի բարձուն-

քում: Իբրև անարատ Գառ նա պատարագվեց, զոհվեց:

Հիսուսի աշակերտները, նրա հարությունից հետո, հաճախ հավաքվում էին Վերնատանը, այնտեղ աղոթքով և Հաղորդության խորհրդի միջոցով պահելու նրա հիշատակը: Հիսուս իր համբարձման պահին աշակերտներին պատվիրեց. «Նստարուք ի քաղաքիդ յԵրուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց»: Նրանք Վերնատանը սպասեցին աղոթքով, հոգևոր երգասացությամբ, սաղմոսներ մրմնջելով և Հիսուսի կյանքը վերհիշելով: Նրա համբարձումից տասը օր հետո, հրեից Պենտեկոստեի տոնի օրը, Սուրբ Հոգին հրեղեն լեզուների կերպարանքով, «սահեղագոչ սաստիկ հնչմամբ», իջավ աշակերտների վրա՝ օժտելով նրանց անսպառ շնորհներով: Միշտ այդ պահին է, որ Վերնատանը Սուրբ Հոգու կենարար դրոշմով հիմնվեց Քրիստոսի Եկեղեցին:

Հիսուս երբ իր աշակերտներից ամենատարեցին՝ Պետրոսին ասում էր՝ «դու ես վեմը, և այդ վեմի վրա պիտի կառուցեմ իմ Եկեղեցին», նա նկատի ուներ նրա հավատը և այդ հավատի վրա հիմնեց իր Եկեղեցին: Մեր Եկեղեցին մենք հաճախ կոչում ենք մայր, որովհետև ի հոգևորս մենք վերածնվում ենք Եկեղեցու ծոցից, այսինքն՝ նրա մկրտության ավազանից, այնտեղ լվացվելով թոթափում ենք մեր ադամական մեղքերը և Սուրբ Հոգու խորհրդանիշ սուրբ մեռոնով՝ դրոշմվելով՝ դառնում ենք զավակները Եկեղեցու: Ահա այսպես է հիմնադրվել Քրիստոսի առաջին Եկեղեցին Աշխարհամատոան: Նրա հիմնադիրն է եղել Քրիստոս և նրա շնորհատու Սուրբ Հոգին:

Հիսուսի աշակերտները Հոգեգալստից հետո քարոզչական առաքելությամբ գնացին Միջերկրական ծովի ավազանի շրջակայքի ծանոթ բոլոր երկրները՝ բաշխելու համար այն լույսը, որ ստացել էին նրանից, և այն ճշմարիտ Բանը (լոգոսը), որ ճանաչել էին նրա անձի միջոցով: Նրանք աշխարհով մեկ վկայեցին Քրիստոսի հարության ավետիսը, որ ամեն մեկ հավատացյալի հարության միջոցն է դառնալու:

Մեր Եկեղեցու հայրերը այս կիրակին կոչել են նաև Կանաչ: Մեր շուրջը նայելիս իրապես այս շրջանում ամեն ինչ կանաչ ենք տեսնում: Բնությունը թոթափում է ձմռան ցուրտը, հողը փափկում է, ծառերը կանաչում են, ծաղիկներ բացում, կանաչ ծիլերը հողի տակից արևին են ժպտում, դաշտերն ու լեռնալանջերը ծաղկով ու դալար կանաչով զարդարվում, առվակները երգում են ուրախ խոխոջով, նույնիսկ մեր վանքերում բույն դրած ծիծեռնակները վերադառնալով իրենց երգն են միացնում մեր երգին: Փառք բարձրյալին Աստուծո, որ ձմռանը հաջորդում է գարունը: Կյանքում մենք մեռնում ենք մարմնով, բայց մեր հոգին անմահ է, հավիտենական: Աստծուց մեր ստացած հոգով մենք նմանվում ենք Արարչին: «Աստված իր պատկերի համաձայն ստեղծեց մարդուն», ասում է Աստվածաշունչը: Այդ պատկերը Աստուծո լուսափայլ ներկայությունն է մեր մեջ, և մենք պետք է ձգտենք գտնել այն:

Այս աշխարհը և կյանքը մարդու համար մի հովիտ է դառն ու քաղցր, որտեղից անցնում ենք մեր ծննդյան օրվանից մինչև մեր աչքերը փակելը: Մարդն ապրում է այնքան, որքան նախասահմանված է ի վերուստ: Իսկ մեր մարմնավոր կյանքը՝ ժամանակավոր, առավելագույնը 80—90 տարի: Քիչ բախտավորներ են թևակոխում հարյուրը:

Կյանքն Աստուծո կողմից տրված մի պարգև է մարդուն, որպեսզի այն գեղեցիկ լինի և արդյունավետ պետք է ծառայեցվի վսեմ նպատակների իրագործման: Հաճախ կյանքում մեզ հաջողվում է բարձր դիրքի և հարստության հասնել, սակայն եթե չենք կարողանում մեր կյանքը ծառայեցնել ժողովրդի, ազգի, հայրենիքի ու մարդկության շահերին, նշանակում է, որ մենք անձնասերներ ենք, և մեր շահածը շատ շուտ քամուն է տրվում: Իսկ, ընդհակառակը, եթե այն ծառայեցնենք ազնիվ նպատակների, դառնում ենք իմաստուն, մարդասեր և երկրնքում դիզում անսպառ գանձեր:

Անցյալ դեկտեմբերին Հյուսիսային Հայաստանը ենթարկվեց տարերային աղետի: Ահավոր ուժի երկրաշարժը քարուքանդ արեց բազմաթիվ բարեկարգ, շեն քաղաքներ ու գյուղեր: Տասնյակ հազարներով զոհեր տվեցինք, փլատակների տակ մնացին հազարավորներ, իրենց տների գերանների տակ թաղվեցին մեծ թվով մարդիկ: Աղետը ոչ միայն մեր տունը քանդեց, այլ նաև սարսեց մեր հավատը. Կոմիտասի երգի բառերով ասած՝ դարձանք «տո, լաճ տնավեր»:

Բայց այդ «տո լաճ տնավեր»-ը մեզ համար տևական վիճակ չպետք է լինի, որովհեև մեր երկիրը նման աղետներ շատ է տեսել, մենք միշտ դիմացել ենք: Մենք շինարար ժողովուրդ ենք, հավատում ենք, որ միասնական ուժերով կարող ենք արագորեն վերաշինել մեր քանդված քաղաքներն ու գյուղերը:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, իսկական քրիստոնյան նա է, ով իր եղբորը օգնության ձեռք է երկարում, թի-

կունք կանգնում իր նմանին, որպեսզի ոտքի կանգնի: Մեր միջից իսպառ պետք է վերանան շահատակության, յուրացումի, կողոպուտի հոռի բարքերը:

Տիպար քրիստոնյան իր ունեցվածքից պետք է բաժին հանի իր նմանին, անձնասեր չլինի, այլ՝ ընկերասեր, բարեսիրտ: Հարկ է, որ մենք զոհողություն հանձն առնենք տուժածին մխիթարելու, սովածին կերակրելու, անօթևանին տեղ տալու, մերկին հագվեցնելու, ծարավին ջուր տալու և մեր սրտի ջերմությամբ գուրգուրելու ընդրանց:

Թող այս գարնան հետ Քրիստոսի հարության շունչը տարածվի մեր երկրում, վերաշինենք մեր տունը, ծաղկեցնենք մեր հայրենիքը: Թող հայ ժողովրդի զավակները չդառնան թափառական օտար ափերում, այլ վերադառնան հայրենիք, վերահաստատվեն իրենց տաքուկ բներում և լծվեն հայրենաշեն աշխատանքի:

Սիրելի հավատացյալներ, իբրև Եկեղեցի և իբրև քրիստոնյա ժողովուրդ, մենք շուրջ երկու հազար տարվա պատմություն ունենք: Հայաստանյայց Եկեղեցին բաղադրիչ մեկ մասն է ամբողջ աշխարհի քրիստոնյա Եկեղեցիների: Աշխարհամատուցման սութիվ, իբրև քրիստոնեական մի հին Եկեղեցու անդամներ, մեր ուխտն ու հավատը վերանորոգենք հանդեպ Քրիստոսի և նրա հիմնած հավիտենական Եկեղեցու: Թող մեր նոր սերունդը, ինչպես անցյալում, այսօր էլ ծնվի նրա մյուռոնաբույր ավազանից և դառնա ժառանգորդ բարյաց: Թող աստվածային շնորհները անսպառ լինեն մեր սիրեցյալ ժողովրդի վրայից: Թող բացվի հոգևոր գարունը նոր ծաղկունքով և նոր հեռանկարներով և հավետ օրհնյալ լինի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունը այժմ և հավիտյանս:

«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»: Ամեն: